ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՄԱՑ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ**

1. Արուսեան համայնքի «Արուսեան քաղաքի գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2021-2025 թվականներին ընդունված երեխաների համար սահմանել համապատասխան տարվա համար սահմանված դրույքաչափը (Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արուսեան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 69-Ն, 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն, 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 192-Ն, 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 198-Ն, 2025 թվականի հունվարի 23-ի N 04-Ն), իսկ 2026 թվականին ընդունված երեխաների համար սահմանել 5 000 (հինգ հազար) դրամ՝ բոլոր բաժինների և նախապատրաստական խմբերի համար:
2. Արուսեան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում չունեցող 6-17 տարեկանը ներառյալ երեխաների (այսուհետ՝ երեխա) համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի կրկնակի չափով:
3. 2020 թվականի սեպտեմբերից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կամ փախստականի կարգավիճակ ունեցող Արուսեան համայնք տեղափոխված ընտանիքների երեխաների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում նշված գումարի չափով:
4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող (անկախ հաշվառման վայրից) անձանց երեխաների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2026 թվականի համար սահմանել յուրաքանչյուր երեխայի համար՝ սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի չափով:



Հավելված 6

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արուսյան
համայնքի նախագահու 2025 թվականի
նոյեմբերի 20-ի N 177-Ն որոշման

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՀԱՄԱԼԻՐ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ**

N	Մարզաձևեր	Ծառայության վճարների չափը (դրամ)
1.	Լողի 1 ժամ պարապմունքի համար	1 500 (հազար հինգ հարյուր)
2.	Լողի 12 ժամ պարապմունքի համար	15 000 (տասնհինգ հազար)
3.	Ակրոբատիկա, գեղարվեստական մարմնամարզություն (12 ժամ պարապմունքի համար)	8 000 (ութ հազար)
4.	Մարզասրահ (12 ժամ պարապմունքի համար)	6 000 (վեց հազար)
5.	Մեծ թենիսի 1 ժամ անհատական պարապմունքի համար՝ մարզիչի հետ	10 000 (տասը հազար)
6.	Մեծ թենիսի 12 ժամ պարապմունքի համար՝ խմբում 8-10 հոգի	25 000 (քսանհինգ հազար)
7.	Մեծ թենիսի 12 ժամ պարապմունքի համար՝ խմբում 3-4	50 000 (հիսուն հազար)
8.	Գյուղերում գործող խմբակներ	4 000 (չորս հազար)



Հավելված 7

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արովյան
համայնքի ավագանու 2025 թվականի
նոյեմբերի 20-ի N 177-Ն որոշման

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳԵՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ
ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ**

1. Արովյան համայնքի «Գեղաշեն գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2026 թվականի համար սահմանել 3 000 (երեք հազար) դրամ:
2. Արովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում չունեցող 6-17 տարեկանը ներառյալ երեխաների (այսուհետ՝ երեխա) համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի կրկնակի չափով:
3. 2020 թվականի սեպտեմբերից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կամ փախստականի կարգավիճակ ունեցող Արովյան համայնք տեղափոխված ընտանիքների երեխաների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում նշված գումարի չափով:
4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող (անկախ հաշվառման վայրից) անձանց երեխաների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2026 թվականի համար սահմանել յուրաքանչյուր երեխայի համար՝ սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի չափով:



Հավելված 8

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Արովյան
համայնքի ավագանու 2025 թվականի
նոյեմբերի 20-ի N 177-Ն որոշման

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒԴԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՄԱՑ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ**

1. Արովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2022-2025 թվականներին ընդունված երեխաների համար սահմանել համապատասխան տարվա համար սահմանված դրույքաչափը (Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն, 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 192-Ն, 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 198-Ն, 2025 թվականի հունվարի 23-ի N 04-Ն), իսկ 2026 թվականին ընդունված երեխաների համար սահմանել՝

N	Բաժիններ	Մասնակի փոխհատուցման գումարի ամսական չափը (դրամ)
1.	1-7-րդ դասարան (երաժշտական բաժին)	3 000 (երեք հազար)
2.	Վոկալ	3 000 (երեք հազար)
3.	Պար	4 000 (չորս հազար)
4.	Ժող. գործիքներ	3 000 (երեք հազար)
5.	Մարզական խմբակ	3 000 (երեք հազար)

2. Արովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում չունեցող 6-17 տարեկանը ներառյալ երեխաների (այսուհետ՝ երեխա) համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի կրկնակի չափով:

3. 2020 թվականի սեպտեմբերից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կամ փախստականի կարգավիճակ ունեցող Արովյան համայնք տեղափոխված ընտանիքների երեխաների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում նշված գումարի չափով:

4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գործառնաբերում ծառայող (անկախ հաշվառման վայրից) անձանց երեխաների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2026 թվականի համար սահմանել յուրաքանչյուր երեխայի համար՝ սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի չափով:




Հավելված 9

Հայաստանի Հանրապետության
Էկոտայքի մարզի Արույան
համայնքի ակադեմիա 2025 թվականի
տեղաբնի 20-ի N 177-Ն որոշման

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿԱՄԱՐԻՍ ԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ
ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ**

1. Արույան համայնքի «Կամարիս գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2026 թվականի համար սահմանել 3 000 (երեք հազար)՝ բոլոր խմբակների համար:
2. Արույան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում չունեցող 6-17 տարեկանը ներառյալ երեխաների (այսուհետ՝ երեխա) համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի կրկնակի չափով:
3. 2020 թվականի սեպտեմբերից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կամ փախստականի կարգավիճակ ունեցող Արույան համայնք տեղափոխված ընտանիքների երեխաների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում նշված գումարի չափով:
4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գործառնաբերում ծառայող (անկախ հաշվառման վայրից) անձանց երեխաների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2026 թվականի համար սահմանել յուրաքանչյուր երեխայի համար սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի չափով:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 նոյեմբերի 2025 թվականի N 178-Ն

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՆՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի 2-րդ մասի, Արմվյան համայնքի ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝**

1. Սահմանել Արմվյան համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյուների օգտագործման տրամադրման ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ ամսական 500 (հինգ հարյուր) դրամ, իսկ յուրաքանչյուր հենասյանմեկ լարանցման համար՝ ամսական 300 (երեք հարյուր) դրամ:

2. Սահմանել Արմվյան համայնքի վարչական տարածքում մալուխային գետնանցումների օգտագործման ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ գծամետրի համար 50 (հիսուն) դրամ:

3. Սահմանել տաքսիների, միջմարզային, ներմարզային և ներհամայնքային ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղային ավտոբուսների և միկրոավտոբուսների համար Արմվյան համայնքի ավտոկանգառներից օգտվելու ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ ամսական 3 000 (երեք հազար) դրամ՝ յուրաքանչյուր ավտոմեքենայի համար:

4. Սահմանել Արմվյան համայնքի «Արմվյան քաղաքի Գագիկ Ծառուկյանի անվան սպորտի և մշակույթի համալիր կենտրոն», «Արմվյան քաղաքի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» և «Երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների դահլիճը և նախասրահին օգտագործման տրամադրելու համար՝ 1 ժամվա ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ 30 000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել Արմվյան համայնքի «Գեղաշեն գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճն օգտագործման տրամադրելու համար՝ մեկ օրվա ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ 20 000 (քսան հազար) դրամ:

6. Սահմանել Արմվյան համայնքի «Արամուս գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճն օգտագործման տրամադրելու համար՝ մեկ ժամվա ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ 10 000 (տասը հազար)

դրամ:

7. Սահմանել «Աբովյանի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից Աբովյան համայնքի գերեզմանատների պահպանման և սպասարկման ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ յուրաքանչյուր հողարկավորության համար՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ:

8. Սահմանել «Աբովյանի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից Աբովյան համայնքի բազմահարկ շենքերի վերելակների սպասարկման ծառայության դիմաց փոխհատուցման ամսական վճարի չափը՝ համաձայն հավելված 1-ի:

9. Սահմանել «Աբովյանի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից Աբովյան համայնքի բազմահարկ շենքերի վերելակների տեխնիկական գնման ծառայության դիմաց փոխհատուցման տարեկան վճարի չափը՝ համաձայն հավելված 2-ի:

10. Սահմանել «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից ոռոգման ջուր տրամադրելու ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ հողամասի 1 քառակուսի մետրի համար՝ ոռոգման սեզոնում 20 (քսան) դրամ:

11. Սահմանել շինարարական կամ խոշոր եզրաչափի աղբի գոյացման դեպքում նշված աղբի՝ համապատասխան կոնտեյներով փոխադրման ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ ըստ ծավալի՝ 1 խորանարդ մետր շինարարական կամ խոշոր եզրաչափի աղբի տեղափոխման համար 3 000 (երեք հազար) դրամ:

12. Սահմանել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարման կամ օգտագործման տրամադրման փաստաթղթերի (փաթեթի) կազմման համար ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ համաձայն հավելված 3-ի:

13. Սահմանել Աբովյան համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի գործառական նշանակության փոփոխության ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ համաձայն հավելված 4-ի:

14. Սահմանել համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական մեքենաները օգտագործման տրամադրելու ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ համաձայն հավելված 5-ի:

15. Աբովյան համայնքում ինժեներական ենթակառուցվածքների մոնտաժման կամ ապամոնտաժման աշխատանքների համաձայնության տրամադրման հետ կապված ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ համաձայն հավելված 6-ի:

16. Սահմանել Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Գազիկ Ծառուկյանի անվան սպորտի և մշակույթի համալիր կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության թենիսի կորտը տրամադրելու ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ ժամի համար 5 000 (հինգ հազար) դրամ:

17. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -20

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ
ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ
ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ
ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ
ՅՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ
ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ
ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ
ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ
ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ

 Դ. ԶԱՐՈՅԱՆ

2025թ. նոյեմբերի 20
ք. Աբովյան



Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Արդյան համայնքի ավագանու
2025 թվականի նոյեմբերի 20-ի
N 178-Ն որոշման

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԴԱՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՋ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐԴԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱՀԱՐԿ
ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԵԼԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ
ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԶԱՓԸ**

N	Շենքերի հարկերի և բնակարանների թիվը	Ամսական վճարի չափը (դրամ)
1.	6 հարկանի շենք, հարթակում 2 բնակարան	5 800 (հինգ հազար ութ հարյուր)
2.	6 հարկանի շենք, հարթակում 3 բնակարան	6 500 (վեց հազար հինգ հարյուր)
3.	6 հարկանի շենք, հարթակում 4 բնակարան	7 700 (յոթ հազար յոթ հարյուր)
4.	9 հարկանի շենք, հարթակում 2 բնակարան	8 800 (ութ հազար ութ հարյուր)
5.	9 հարկանի շենք, հարթակում 3 բնակարան	10 120 (տասը հազար հարյուր քսան)
6.	9 հարկանի շենք, հարթակում 4 բնակարան	11 440 (տասնմեկ հազար չորս հարյուր քառասուն)
7.	14 հարկանի շենք, հարթակում 4 բնակարան	16 750 (տասնվեց հազար յոթ հարյուր հիսուն)
8.	12 հարկանի շենք, հարթակում 6 բնակարան	18 640 (տասնութ հազար վեց հարյուր քառասուն)
9.	16 հարկանի շենք, հարթակում 6 բնակարան	25 450 (քսանհինգ հազար չորս հարյուր հիսուն)



Հավելված 2

Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Արմավյան համայնքի ավագանու
2025 թվականի նոյեմբերի 20-ի
N 178-Ն որոշման

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱՀԱՐԿ
ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԵԼԱԿՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ԶԱՓԸ**

N	Շենքերի հարկերի թիվը	Տարեկան վճարի չափը (դրամ)
1.	6-9 հարկանի շենքեր	15 000 (տասնհինգ հազար)
2.	12 հարկանի շենքեր	20 000 (քսան հազար)
3.	14 հարկանի շենքեր	23 300 (քսաներեք հազար երեք հարյուր)
4.	16 հարկանի շենքեր	26 700 (քսանվեց հազար յոթ հարյուր)



Հավելված 3
Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Արովյան համայնքի ավագանու
2025 թվականի նոյեմբերի 20-ի
N 178-Ն որոշման

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ (ՓԱԹԵԹԻ) ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

Հ/Հ	Վճարի տեսակը	Դրույքաչափը (դրամ)
1.	Օրինականացված ինքնակամ կառույցների օտարման կամ օգտագործման տրամադրման համար	65 000 (վաթսունհինգ հազար)
2.	Բնակելի կամ ոչ բնակելի տարածքների/ գույքի օտարման և օգտագործման տրամադրման համար	73 000 (յոթանասուներեք հազար)
3.	Աճուրդով վաճառվող կամ մրցույթով առաջարկվող գույքի կամ իրավունքի տրամադրման համար	65 000 (վաթսունհինգ հազար)



Հավելված 4
Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Արովյան համայնքի ավագանու
2025 թվականի նոյեմբերի 20-ի
N 178-Ն որոշման

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐԻ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

Հ/Հ	Վճարի տեսակը	Դրույքաչափը (դրամ)
1.	Շինությունների համար՝	
	1) Ֆիզիկական անձանց համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար	250 (երկու հարյուր հիսուն)
	2) Իրավաբանական անձանց համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար	250 (երկու հարյուր հիսուն)
2.	Հողամասերի համար՝	
	1) Ֆիզիկական անձանց համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար	100 (հարյուր)
	2) Իրավաբանական անձանց համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար	100 (հարյուր)



Հավելված 5
Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Արովյան համայնքի ավագանու
2025 թվականի նոյեմբերի 20-ի
N 178-Ն որոշման

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐԻ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

Հ/Հ	Վճարի տեսակը	Դրույքաչափը (դրամ)
1.	Տրակտորի համար՝	
	1) Խոտի 1 հակի (տուկ) պրեսավորում	100 (հարյուր)
	2) Գուլթան՝ 1000 մետրի համար	5 000 (հինգ հազար)
	3) Ֆրեզ՝ 1000 մետրի համար	5 000 (հինգ հազար)
	4) Սրակիչ (գարնանային սրսկում առանց նյութերի տրամադրման)՝ 1000 մետրի համար	1000 (հազար)
	5) Սրակիչ (սանիտարական սրսկում առանց նյութերի տրամադրման)՝ 1000 մետրի համար	5 000 (հինգ հազար)
2.	Կոմբայնի համար՝ Հացահատիկեղենի հավաք՝ 1000 մետրի համար	2 000 (երկու հազար)



Հավելված 6

Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզի Արովյան համայնքի ավագանու
2025 թվականի նոյեմբերի 20-ի
N 178-Ն որոշման

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԿԱՄ
ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

Հ/Հ	Վճարի տեսակը	Դրույքաչափը (դրամ)	
		Իրավաբանական անձանց համար	Ֆիզիկական անձանց համար
1.	Մինչև 100 մետրի դեպքում	50 000 (հիսուն հազար)	25 000 (քսանհինգ հազար)
2.	101-ից մինչև 500 մետրի դեպքում	100 000 (հարյուր հազար)	50 000 (հիսուն հազար)
3.	501 և ավելի մետրի դեպքում	150 000 (հարյուր հիսուն հազար)	75 000 (յոթանասունհինգ հազար)



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 նոյեմբերի 2025 թվականի N 179-Ն

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի, Արուսյան համայնքի ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝**

1. 2026 թվականի համար սահմանել տեղական տուրքերի գծով հետևյալ արտոնությունները՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արուսյան համայնքի վարչական տարածքում պետական կամ համայնքային կարիքների համար՝
ա. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառել գրոյական դրույքաչափ,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառել գրոյական դրույքաչափ,

գ. գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների թույլտվության համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառել գրոյական դրույքաչափ,

դ. շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառել գրոյական դրույքաչափ:

2. 2026 թվականի համար սահմանել տեղական վճարների գծով հետևյալ արտոնությունները՝

1) համայնքային և պետական կարիքների համար՝ Աբովյան համայնքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտին ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների վճարի համար կիրառել գրոյական դրույքաչափ,

2) համայնքային և պետական կարիքների համար՝ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի համար կիրառել գրոյական դրույքաչափ,

3) Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Գագիկ Ծառուկյանի անվան սպորտի և մշակույթի համալիր կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում գործող սպորտային խմբերում ներառված երեխաների համար՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի նկատմամբ կիրառել գրոյական դրույքաչափ,

4) Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի նկատմամբ կիրառել գրոյական դրույքաչափ,

5) Աբովյան համայնքում աղքատության աշխատանքները կազմակերպելու համար բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար սահմանված աղքատության վճարի դրույքաչափի 100 %-ի չափով նվազեցման արտոնություն՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի սահմանների պաշտպանության ժամանակ զոհված կամ անհայտ կորած զինծառայողների ընտանիքի անդամների (ծնող, ամուսին/կին, զավակ) համար,

6) Աբովյան համայնքում աղքատության աշխատանքները կազմակերպելու համար բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար սահմանված աղքատության վճարի դրույքաչափի 50%-ի չափով նվազեցման արտոնություն՝

ա. հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց համար,

բ. Հայաստանի Հանրապետության ուժային կառույցների (Ազգային անվտանգության ծառայության, Պաշտպանության և Ներքին գործերի նախարարությունների) ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) անձանց ընտանիքի անդամների համար,

գ. Հայրենական մեծ պատերազմի վետերանների, Լեռնային Ղարաբաղի պատերազմի մասնակիցների, նրանց հավասարեցված անձանց և նրանց հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների (ծնող, ամուսին/կին, զավակ) համար:

7) Մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման արտոնություն՝ 100 %-ի չափով՝

ա. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի պաշտպանության ռազմական գործողություններին մասնակցած ծնողի երեխաների, մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) կամ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից,

բ. զինվորական ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ հաշմանդամ անձ ճանաչված անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից,

գ. երկկողմանի ծնողագուրկ երեխաների համար՝ եթե ունեն Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում,

դ. կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից,

ե. ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով կամ ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափն անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 160 %-ի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման համակարգով սոցիալապես անապահով ճանաչված, անապահովության սահմանային միավորից՝ 28-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից:

8) Մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման արտոնություն՝ 50 %-ի չափով Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում ունեցող երեխաների համար՝

ա. միակողմանի ծնողագուրկ (մահացած ծնող ունեցող) երեխաների համար,

բ. ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ և (կամ) ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված ծնող ունեցող երեխաների համար,

գ. նույն կազմակերպություն հաճախող 3 և ավելի երեխաների համար,

դ. հաշմանդամության կարգավիճակ ունեցող երեխաների համար:

9) Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում՝ ազգային, լարային և փողային նվագարանների բաժիններում պետության կողմից նվիրաբերության (սուբվենցիայի) հատկացման պայմանագրով նախատեսված քանակով լավագույն սովորողներն ազատվում են ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի վճարումից:

10) Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց», «Աբովյան քաղաքի գեղարվեստի դպրոց», «Գեղաշեն գյուղի մշակույթի տուն», «Արամուա գյուղի մարզամշակութային կենտրոն» և «Կամարիս գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային

կազմակերպությունների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման արտոնություն 100 %-ի չափով՝

ա. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի սահմանների պաշտպանության, մարտական գործողությունների ժամանակ զոհված կամ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից,

բ. երկկողմանի ծնողագուրկ երեխաների համար՝ եթե ունեն Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում:

11) Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց», «Աբովյան քաղաքի գեղարվեստի դպրոց», «Գեղաշեն գյուղի մշակույթի տուն», «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» և «Կամարիս գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման արտոնություն՝

50 %-ի չափով, Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում ունեցող՝

ա. միակողմանի ծնողագուրկ (մահացած ծնող ունեցող) երեխաների համար,
բ. ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ և (կամ) ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված ծնող ունեցող երեխաների համար,

գ. չորս և ավելի երեխա ունեցող և ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով կամ ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափն անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 160 %-ի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման համակարգով սոցիալապես անապահով ճանաչված, անապահովության սահմանային միավորից՝ 28-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի երեխաների համար,

դ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող երեք և ավելի երեխա ունեցող անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից,

ե. նույն կազմակերպություն հաճախող նույն ընտանիքի 3 և ավելի երեխաների համար,

զ. գյուղական բնակավայրերում գործող կազմակերպություններում 3 և ավելի բաժին հաճախելու դեպքում՝ նույն ընտանիքի 2 երեխայի համար,

է. հաշմանդամության կարգավիճակ ունեցող, կրթության և զարգացման առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

3. 2026 թվականի համար սահմանել Աբովյան համայնքում տեղական վճարների նոր տեսակների գծով հետևյալ արտոնությունները՝

1) Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Գագիկ Ծառուկյանի անվան սպորտի և մշակույթի համալիր կենտրոն», «Աբովյան քաղաքի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց», «Երեխաների աջակցության կենտրոն» և «Գեղաշեն գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների դահլիճների և նախասրահների համար սահմանված վճարի 100 %-ի չափով արտոնություն այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, ովքեր դահլիճի օգտագործման համար շահույթ չեն հետապնդում կամ օգտագործում են բարեգործական

նպատակով:

2) «Աբովյանի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից Աբովյան համայնքի գերեզմանատների պահպանման և սպասարկման ծառայության համար սահմանված վճարի 100 %-ի չափով արտոնություն՝

ա. Աբովյան համայնքի գյուղական բնակավայրերում հաշվառված կամ փաստացի բնակիչ համարվող կամ ընտանեկան գերեզմանատուն ունեցող անձանց հուղարկավորության համար,

բ. Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի տարածքում գործող տարեցների շուրջօրյա խնամք իրականացնող հաստատության բնակիչների հուղարկավորության համար,

գ. Աբովյան համայնքում հաշվառված անօթևան անձանց հուղարկավորության համար,

դ. Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում հաշվառված կամ փաստացի բնակվող միայնակ և հարազատներ չունեցող անձանց հուղարկավորության համար,

ե. Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում հաշվառված կամ փաստացի բնակվող՝ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված անձանց հուղարկավորության համար,

զ. Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում հաշվառված կամ փաստացի բնակվող, ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով կամ ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափն անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 185 %-ի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման համակարգով սոցիալապես անապահով ճանաչված, անապահովության սահմանային միավորից՝ 28-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամի հուղարկավորության համար,

է. 2023 թվականի սեպտեմբերից Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում հաշվառված կամ փաստացի բնակվող ընտանիքի անդամի հուղարկավորության համար:

3) Համայնքային և պետական կարիքների համար Աբովյան համայնքում ինժեներական ենթակառուցվածքների մոնիտաժման կամ ապամոնիտաժման աշխատանքների համաձայնության տրամադրման հետ կապված ծառայության վճարի համար կիրառել արտոնություն՝ մատուցվող ծառայության վճարի նկատմամբ կիրառելով զրոյական դրույքաչափ:

4. Սույն որոշման 2-րդ կետի 5-6-րդ ենթակետերում նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք են հանդիսանում՝

1) դիմում՝ ուղղված համայնքի ղեկավարին՝ տեղական վճարի արտոնություն ստանալու համար,

2) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն,

3) սույն որոշման 2-րդ կետի 5-6-րդ ենթակետերում սահմանված խմբերից որևէ մեկին պատկանելու մասին կամ կարգավիճակը հաստատող փաստաթուղթը (երը),

4) տեղեկանք մշտական կամ փաստացի հաշվառման վերաբերյալ,

5) այլ տվյալներ (անհրաժեշտության դեպքում):

5. Սույն որոշման 2-րդ կետի 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ ենթակետերում նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք է հանդիսանում՝

1) դիմում՝ ուղղված համայնքի ղեկավարին՝ տեղական վճարի արտոնություն ստանալու համար,

- 2) երեխայի ծնողի/օրինական ներկայացուցիչի անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն,
- 3) երեխայի ծննդյան վկայականի կամ անձնագրի պատճեն,
- 4) Աբովյանի համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի կողմից տրված տեղեկանքը՝ տվյալ կազմակերպությունում երեխայի սովորելու/հաճախելու վերաբերյալ,
- 5) սույն որոշման 2-րդ կետի 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ ենթակետերում սահմանված խմբերից որևէ մեկին պատկանելու մասին կամ կարգավիճակը հաստատող փաստաթուղթը (երը),
- 6) տեղեկանք մշտական կամ փաստացի հաշվառման վերաբերյալ,
- 7) այլ տվյալներ (անհրաժեշտության դեպքում):
6. Սույն որոշման 2-րդ կետով նախատեսված արտոնությունները կիրառվում են դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները) ներկայացնելուն հաջորդող ամսվա մեկից: Նույն հիմունքներով վերսկսում է դադարեցված արտոնության կիրառումը:
7. Արտոնության կիրառումը մերժվում է օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության կամ ոչ հավաստի տվյալների ներկայացման դեպքում: Կիրառված արտոնությունը դադարեցվում է սույն որոշման 2-րդ կետով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում՝ դրանք ի հայտ գալու օրվան հաջորդող ամսվա մեկից:
8. Տեղական վճարներից օգտվողների համար կիրառվում է համայնքի կողմից սահմանված միայն մեկ արտոնություն՝ յուրաքանչյուր տեղական վճարի մասով:
9. Սույն որոշման 3-րդ կետի 1-2-րդ ենթակետերում նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք է հանդիսանում՝
 - 1) դիմում՝ ուղղված համայնքի ղեկավարին՝ տեղական վճարի արտոնություն ստանալու համար,
 - 2) անձնագրի կամ նույնականացման քարտի և/կամ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի վկայականի պատճեն,
 - 3) կարգավիճակը հաստատող փաստաթուղթը (երը),
 - 4) տեղեկանք մշտական կամ փաստացի հաշվառման վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում),
 - 5) այլ տվյալներ (անհրաժեշտության դեպքում):
10. Աբովյանի համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափ կիրառելու դեպքում փաստաթղթեր չեն ներկայացվում:
11. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի համար կիրառելու 50- 100 %-ի չափով նվազեցման արտոնություն՝ ավագանու կողմից սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան:
12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -20

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ
ԹԵՆԵՔԵԶՅԱՆ ԱՆԻ
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ
ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ
ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ
ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ
ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ
ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ
ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ

 Գ. ԶԱՐՈՅԱՆ

2025թ. նոյեմբերի 20
ք. Արովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 նոյեմբերի 2025 թվականի N 180-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 05-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների և հիմք ընդունելով Արովյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և եկամուտների հաշվառման բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2025 թվականի նոյեմբերի 05-ի N Բ-7329), Արովյան համայնքի ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝**

1. Արովյան համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 05-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «6 703 430.0» թիվը փոխարինել «7 092 510.0» թվով, 2-րդ ենթակետում «10 651 547.0» թիվը փոխարինել «11 040 627.0» թվով.

2) որոշմամբ հաստատված 1, 2, 3 և 6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն 1-4 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -8

ԶԱՐՈՅԱՆ ԴԱԿԻԹ

ՅՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՀԱԳԱՆ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՈՒԶՄԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՀԱԿՈՔՅԱՆ ՆԱԻՐԻ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱԿԱԼ

 Դ. ԶԱՐՈՅԱՆ



Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արուսյան
համայնքի ավագանու
2025 թվականի նոյեմբերի 20-ի N 180 - Ն որոշման

« Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արուսյան
համայնքի ավագանու
2025 թվականի հունվարի 23-ի N 05 - Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 1
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդված ի NN	այդ թվում		
			Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄՆԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		7 092 510,0	5 942 510,0	1 150 000,0
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 +տող 1140+ տող 1150) , այդ թվում՝	7100	2 318 489,4	2 318 489,4	0,0
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112+տող 1113), այդ թվում՝	7131	781 602,4	781 602,4	0,0
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		20 936,4	20 936,4	
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		18 401,0	18 401,0	
1113	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ		742 265,0	742 265,0	
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	747 103,0	747 103,0	0,0
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		747 103,0	747 103,0	
1130	1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310 + տող 11311+տող 11312+ տող 11313 + տող 11314+տող 11315+ տող 11316 + տող 11317+ տող 11318 + տող 11319), այդ թվում՝	7145	719 784,0	719 784,0	0,0
11301	Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար		580 000,0	580 000,0	
11302	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքներ կատարելու թույլտվության համար		10 000,0	10 000,0	
11303	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար		500,0	500,0	
11304	Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրլեռն. համայնք-ի վարչ. տարածքում, բացառ. միջպետ. և հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի կողեզրում, խանութ-ում և կրպակ-երում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . գազ-ի վաճառքի թույլտվ. համար		8 100,0	8 100,0	
11305	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		3 120,0	3 120,0	
11306	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար		4 740,0	4 740,0	

1	2	3	4	5	6
11307	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար		26 570,0	26 570,0	
11308	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար		4 000,0	4 000,0	
11309	Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		3 780,0	3 780,0	
11310	Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		12 714,0	12 714,0	
11311	Քաղաքային բնակավայրերում ավազանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային կենդանիներ պահելու թույլտվության համար		0,0		
11312	Ավազանու սահմանվ. կարգին ու պայման-ին համ.՝ համայնքի վարչ. տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվ. համար, բացառ. միջպետ. ու հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի օտարման շերտերում և պաշտպ. գոտի-ում տեղադ. գովազդ-րի թույլտվ.-րի (բացառ. Երևան քաղաքի)		63 100,0	63 100,0	
11313	Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդարանի շերտը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվ. համար		550,0	550,0	
11314	Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		160,0	160,0	
11315	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար		1 250,0	1 250,0	
11317	Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար		0,0		
11318	Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար		0,0		
11319	Համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման		200,0	200,0	
11320	Այլ տեղական տուրքեր		1 000,0	1 000,0	
1140	1.4 Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1141 + տող 1142), այդ թվում՝	7146	70 000,0	70 000,0	0,0
1141	Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար		15 000,0	15 000,0	
1142	Նոտարարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթ. պատճեն, հանելու և դրանցից քաղվածք. տալու համար		55 000,0	55 000,0	
1200	2. ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260), այդ թվում՝	7300	3 599 607,6	2 449 607,6	1 150 000,0
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	7321	0,0	0,0	0,0
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0,0		

1	2	3	4	5	6
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	7322	0,0	0,0	0,0
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0,0		
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1252 + տող 1255 + տող 1256) ,	7331	2 449 607,6	2 449 607,6	0,0
1251	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		2 446 809,4	2 446 809,4	
1252	պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ, այդ թվում		0,0	0,0	0,0
1253	Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող ՝ ԶԳ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ				
1255	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		2 798,2	2 798,2	0,0
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + տող 1262), այդ թվում՝	7332	1 150 000,0	0,0	1 150 000,0
1261	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		1 150 000,0		1 150 000,0
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390),	7400	1 174 413,0	1 174 413,0	0,0
1320	3.2 Շահաբաժիններ, այդ թվում՝	7412	0,0	0,0	0,0
	այդ թվում՝		0,0		
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասհանումներ (շահաբաժիններ)		0,0		
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334), այդ թվում՝	7415	70 914,0	70 914,0	0,0
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		46 914,0	46 914,0	
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		2 000,0	2 000,0	
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ		0,0		
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		22 000,0	22 000,0	
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342+ տող 1343), այդ թվում՝	7421	5 999,0	5 999,0	0,0
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		5 999,0	5 999,0	
1343	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող այլ վճարներ				
1350	3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352+տող 1353), այդ թվում՝	7422	682 500,0	682 500,0	0,0
1351	Տեղական վճարներ (տող 13501+տող 13502+տող 13503+տող 13504+տող 13505+տող 13506+տող 13507+տող 13508+տող 13509+տող 13510+տող 13511+տող 13512+տող 13513+տող 13514+տող 13515+տող 13516+տող 13517+տող 13518+տող 13519+տող 13520) , այդ թվում՝		482 500,0	482 500,0	0,0
13501	Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար		0,0		

1	2	3	4	5	6
13502	Ճարտար. նախագծ. փաստաթղթ-ով նախ. շինար. թույլտվ. պահանջ., բոլոր շինարար. աշխատանք-ն իրական. հետո շենք-ի և շինութ-երի (այդ թվում՝ դրանց վերականգն-ը, ուժեղ-ը, արդիակ-ը, ընդլայն-ն ու բարեկարգ-ը) կառուց. ավարտը ավարտ. ակտով փաստագր. ձևակերպ. համար		0,0		
13503	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար		5 000,0	5 000,0	
13504	Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար		0,0		
13505	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար		8 000,0	8 000,0	
13507	Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար		265 000,0	265 000,0	
13510	Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող նազմակերպությունների սպասարկման տարածքներում		4 000,0	4 000,0	
13512	Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նոոմենի կատարման համար		0,0		
13513	Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար		115 000,0	115 000,0	
13514	Համայնքային ենթակայության արտադարձական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար		85 500,0	85 500,0	
13518	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար		0,0		
13519	Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց		0,0		
13520	Այլ տեղական վճարներ		0,0		
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ		200 000,0	200 000,0	
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից (տող 1361 + տող 1362) այդ թվում՝	7431	15 000,0	15 000,0	0,0
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ		15 000,0	15 000,0	
1370	3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (տող 1371.+ տող 1372), այդ թվում՝	7441	0,0	0,0	0,0
1380	3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (տող 1381 + տող 1382), այդ թվում՝	7442	0,0	0,0	0,0
1390	3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392 + տող 1393), այդ թվում՝	7451	400 000,0	400 000,0	0,0
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		400 000,0	400 000,0	

»:



Հավելված 2

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյան համայնքի ավագանու
2025 թվականի նոյեմբերի 20-ի N 180 - Ն որոշման

« Հավելված 2

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյան համայնքի ավագանու
2025 թվականի հունվարի 23-ի N 05 - Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 2

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ**

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ս.7+ս.8)	(հազար դրամով) այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100)	11040627,0	5942510,0	5098117,0
2100	1	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) (տող 2110 + տող 2120 + տող 2130 + տող 2140 + տող 2150 + տող 2160 + տող 2170 + տող 2180) այդ թվում՝	2022000,0	1656000,0	366000,0
2110	1	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ որից՝	1891000,0	1583000,0	308000,0
2111	1	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	1891000,0	1583000,0	308000,0
2112	1	1	2	Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ	0,0	0,0	0,0
2113	1	1	3	Արտաքին հարաբերություններ	0,0	0,0	0,0
2120	1	2	0	Արտաքին տնտեսական օգնություն, որից՝	0,0	0,0	0,0
2121	1	2	1	Արտաքին տնտեսական աջակցություն	0,0	0,0	0,0
2122	1	2	2	Միջազգային կազմակերպությունների միջոցով տրամադրվող տնտեսական օգնություն	0,0	0,0	0,0
2130	1	3	0	Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից՝	24000,0	24000,0	0,0
2131	1	3	1	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	0,0	0,0	0,0
2132	1	3	2	Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ	0,0	0,0	0,0
2133	1	3	3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	24000,0	24000,0	0,0
2140	1	4	0	Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք, որից՝	0,0	0,0	0,0
2141	1	4	1	Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք	0,0	0,0	0,0
2150	1	5	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ որից՝	0,0	0,0	0,0
2151	1	5	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0,0	0,0	0,0
2160	1	6	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝	107000,0	49000,0	58000,0
2161	1	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	107000,0	49000,0	58000,0
2170	1	7	0	Պետական պարտքի գծով գործառնություններ, որից՝	0,0	0,0	0,0
2171	1	7	1	Պետական պարտքի գծով գործառնություններ	0,0	0,0	0,0
2180	1	8	0	Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ, որից՝	0,0	0,0	0,0
2181	1	8	1	Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ, որից՝	0,0	0,0	0,0
2182	1	8	1	- դրամաշնորհներ ՀՀ պետական բյուջեին	0,0	0,0	0,0
2183	1	8	1	- դրամաշնորհներ ՀՀ այլ համայնքների բյուջեներին	0,0	0,0	0,0
2184	1	8	1	այդ թվում՝ Երևանի համաքաղաքային ծախսերի ֆինանսավորման համար	0,0	0,0	0,0
2185	1	8	1		0,0	0,0	0,0
2200	2	0	0	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (այլ դասերին չպատկանող) (տող 2210+2220 + տող 2230 + տող 2240 + տող 2250), այդ թվում՝	1000,0	1000,0	0,0
2210	2	1	0	Ռազմական պաշտպանություն, որից՝	0,0	0,0	0,0

1	2	3	4	5	6	7	8
2211	2	1	1	Ռազմական պաշտպանություն	0,0	0,0	0,0
2220	2	2	0	Քաղաքացիական պաշտպանություն, որից՝	0,0	0,0	0,0
2221	2	2	1	Քաղաքացիական պաշտպանություն	0,0	0,0	0,0
2230	2	3	0	Արտաքին ռազմական օգնություն, որից՝	0,0	0,0	0,0
2231	2	3	1	Արտաքին ռազմական օգնություն	0,0	0,0	0,0
2240	2	4	0	Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում, որից՝	0,0	0,0	0,0
2241	2	4	1	Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում, որից՝	0,0	0,0	0,0
2250	2	5	0	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝	1000,0	1000,0	0,0
2251	2	5	1	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	1000,0	1000,0	0,0
2300	3	0	0	ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	0,0	0,0	0,0
2400	4	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2410 + տող 2420 + տող 2430 + տող 2440 + տող 2450 + տող 2460 + տող 2470 + տող 2480 + տող 2490), այդ թվում՝	2598032,4	0,0	2598032,4
